

ԳԼՈՒԽ ԻԳ

Երբ այս պատմութիւնը լսեցին եւ երիտասարդը դուրս եղաւ, Ռշտունին պատուհան են դուրս կը նայէր քամահաբար, եւ կարծես թէ խոր խորհրդածութեան մէջ էր: Իսկ Երիզացին քովը մօտենալով, եւ իբր թէ քունէ արթնցնելու համար առաջ ուսը կամաց մը ծեծելով եւ ժպտելով՝

– Եղբայր, այդ քու մտածութիւնքդ իմ քովս շատ հին են,– ըսաւ,– բայց միտքդ դիր թէ Կոստանդնուպոլսոյ մէջ կապրինք, այս կայսրութիւնն այսպէս նկեր, այսպէս պիտի երթայ. յիմար, վատ զօրական մը ոչ միայն զօրապետ կը դառնա կնոջ մը շնորհիւ, այլ կայսերական թագը գլուխը եւս դնելու կը ձգտի: Ես արքունիք կ'երթամ հիմա, դու ճաշդ ըրէ, եւ պատրաստ եղիր, ահա սա սենեկին մէջ ինչ գէնք եւ սպառազինութիւն կուգետս կրնաս գտնիլ. ես քեզի իմաց կ'ուտամ՝ եւ ըստ այնմ կը շարժիս: Ուրեմն մնա,ս բարով:

Ժամ մը հազիւ անցած Թեոդորոս Ռշտունի նամակ մը կառնուր իւր բարեկամեն, որ զինք կը յորդորէր անցնիլ պատրաստական գնդին գլուխը, եւ իւր անձնապահապետին առաջնորդութեամբ գալ կրկէսը առանց վայրկեան մը կորսնցնելու: Երբ Թեոդորոս սպառազինեալ իջաւ պալատին ընդարձակ գաւիթը, որ ցամաքային դռան առաջն էր, տեսաւ փառաւոր ձի մը եւ երեք հարիւր սպառազէն հեծելոց խումբ մը, որ իրեն կը սպասէին. հազիւ թէ փողոցին մէջ քիչ մը յառաջացաւ երկու խումբ պատրաստական զօրաց միացան իւր խմբին հետ եւ այդ հազարաց գունդին առջեւ ամբոխը կը բացուէր, կը խոսէր, մինչեւ անարգէք կրկեսին մօտեցան, բայց ահա հոն ահաւոր- տեսարան մը ներկայացաւ Թեոդորոսի առաջ, Վաղէնտիանոսի սպառազէն հինգ-վեց հազար յօդուոյ խումբը հրապարակը գրեթէ բովորովին գրաւէր, ժողովուրդը Ս. Սովիա եկեղեցին վտարէր եւ գաւթին մէջ կատաղի կոտորած մը կը շարունակէր: Երիզացուոյն անձնապահապետին դարձաւ նա՝

– Տղայ՛, ո՞վ է մեր թշնամին,– հարցուց:

– Այդ սպառազէն Վաղէնտիանի զօրքերը,– պատասխանեց երիտասարդը:

– Զալեցէ՛ք տտելես, տղաք,– գոչեց Թեոդորոսի ահագին ձայնը:

Եւ մերկ սուրբ ձեռին յարձակեցաւ իւր զնդով այդ սպառազինաց կողքին վրայ կրկեսին մէջտեղ, եւ աջ ու ձախ կոտորով երկու բաժնեց թշնամի խումբը, որու